

ժայռաբնակ քարայծր՝ արու այծը: «Փորագրողները, գիր» եւ «այծ» հասկացողները անասնաբանական-իմաստաբանական կապի մասին են խօսում եւ մատուցում են հոգնագի միջնորդական դերը դրանում բացայայտում հետեւեալ տուեալները: «Մատներ» պատասխանն ակնկալող հնագոյն հանելուկներից մէկում ասուած է. «Իմ հօրանք տասը է՞ծ ունին, տասի ճակատն էլ պէծիկ (պիսակաւոր) ա»¹²: Այստեղ առկայ են ինչպէս «մատներ» եւ «այծեր», այնպէս էլ «մատի եղունգ» եւ «այծի պիսակաւոր ճակատ» առասպելաբանական համադրումները, իսկ հայերէն եղումը բառը գործածուել է նաեւ փորագրող գործիք իմաստով՝ «քանդակագործի գրիչ» նշանակութեամբ¹³:

Տորքի անուան ստուգաբանութիւնը եւս խօսում է այն մասին, որ նրա վիպական կերպարի առասպելաբանական-տոտեմական նախատիպն այժմ է: Տորքը արմատակից է յուն. *δορκός* «այծքաղ» բառին՝ ծագելով հ.-ե. **dor-k-* նախածեւից¹⁴: Վերջինիս **dor-* արմատը միջին ձայնադարձն է հ.-ե. **der-* «վազել» արմատի, որին են յանգում նաեւ թրակացիների *Δρενις* արական անձնանունը եւ դրա իմաստակիցը՝ ալբաներէն *drëni* «եղջերու» բառը¹⁵: Նշենք նաեւ, որ Տորք ղեցանունը խէթալովիական *Tarhuna, Tarhund, Tarku* կոչուած ամպրոպի աստծոյ անունից ծագելու վերաբերեալ գոյություն ունեցող կարծիքը չի հաստատուած: Բայց դրանք յուն. *δορκός*-ի հետ ծագում են հ.-ե. **dor-k-* նախածեւից

(հ.-ե. **d->* հայերէն տ, յուն. *δ*, խեթ. *t*, հ.-ե. **o->* հայերէն ո (ո), յուն. *ο*, խեթ. *a*, հ.-ե. **k->* հայերէն ք, յուն. *κ*, խեթ. *k*, *z*¹⁶:

Փիւնիկեան այբուբենում ա հնչած A եւ V տառանիշներն (իրենց կողքի պառկած տեսակներով) թէպէտ ալեֆ՝ «ցուլ» էին կոչուած, բայց աւելի նման էին այծագլխի (սուր անկիւնը ներքեւ ուղղուած դիրքով), քան ցլագլխի: Ամենայն հաւանականութեամբ գործ ունենք աքաղական ալպու՝ «եղ, ցուլ» կոչուած սեպախմբի աղբեցութեան հետ, որի հիմքում շումերական *gu(d)* «կով, ցուլ» նշանակող բառի պատկերագիրն է՝ թէեւ V-ին նման, բայց բոլոր ներքնամասով, ինչով որ իրական ցլագլուխը տարբերուած է իրական այծագլխից: Յունական A-ն՝ իր փիւնիկեան նախատիպի գլխիվայր շրջուած տեսակը, որպէս այծագլխի պատկեր է գլխաւորում յունական այբուբենը ճիշտ այնպէս, ինչպէս առաջնորդ արու այծն է գլխաւորում եւ առաջնորդում իր հօտը: Իսկ յունական A-ն արտայայտում էր առաջին հնչիւնը ոչ միայն փիւնիկ. ալեֆ «ցուլ» բառի (որից՝ յուն. A-ի ալփա>ալֆա անունը), այլեւ յուն. *δαιξ* «այծ» բառի եւ սրա հնդեւրոպական արմատակիցների:

Այսպիսի մօտեցման դէպքում հասկանալի է դառնում նաեւ, թէ ինչու Կենդանակերպի համաստեղութիւնները գլխաւորող խոյի համաստեղութեան խորհրդանիշը միջնադարեան մեր մատեաններում ունէր ինչպէս խոյի գլխի տեսք (խոյ բառի «արու ոչխար» իմաստով), այնպէս էլ այս A տեսքը¹⁷: Իսկ սա փիւնիկեան V-ից տարբերուելով միջնագծի բացակայութեամբ, պահպանում է նրա այծագլուխ յիշեցնող տեսքը: Եթէ մեր միջնադարեան նախնիները խոյի համաստեղութեան համար կիրառել են այդ երկու նշաններն էլ, ուրեմն աւելի վաղ

16 Գ. Ջաֆուկեան, Հայերէնը եւ ճանապարհական հիմնականները, Երեւան, 1970, էջ 85, 135:
17 Ա. Արքախանյան, Նախամաշտոցեան հայ գիրը եւ գրչութիւնը, Երեւան, 1982, էջ 112:

12 Ս. Յարութիւնեան, *ԱԶ*, աշխ., էջ 103:
13 ՀԱԲ, հտ. II, էջ 22:
14 Ս. Պետրոսեան, Հնագոյն Հայաստանի գլխատար աստուածութիւնների շուրջ, «Հայաստանի էկոլոգիական հանդէս», թիւ 2, Երեւան, 2003, էջ 127-128. Առնի, Ամպրոպի աստծու մակդիրները գաղափարներում, «ՎՊՄԻ միջազգային գիտա-ժողովի նիւթեր» Աուրում հայ գրատպութեան 500-ամեակին», Վանաձոր, 2012, էջ 7, ծան. 5:
15 В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, стр. 120.

շրջանում խոյ բառը վերաբերել է թէ՛ արու ոչխարին, թէ՛ արու այծին, որոնք երկուսն էլ խոյացող (խոյացող<խոյանալ «յարձակուել») եւ խոյահարող (խոյահարել<խոյահարել «խոյավարի հարուածել») են. հմտ. նրանց ընդօրինակող ռազմական մեքենայի «խոյ» անունը: Ի դէպ, Այծեղջիւրի համաստեղութեան խորհրդանիշը այժմ էլ էր, այլ այծագլուխ (կամ առաջնամասով այծ) վիշապ օձը, ինչը վկայուած է ինչպէս ժայռապատկերներում, այնպէս էլ միջնադարի ձեռագրերում: Եթէ սրանցում Այծեղջիւրի երկու խորհրդանիշներից մէկը եղջերաւոր կենդանու շրջուած գլխի պատկեր է յիշեցնում, ապա միւսը դաւարուած օձի տեսք ունի¹⁸: Ըստ այսմ, Այծեղջիւրի համաստեղութիւնը չենք կարող այծի երկնային արտապատկերն համարել, մանաւանդ որ այն երբեք էլ գլխաւորել, սկզբնաւորել կենդանակերպի համաստեղութիւնների շարքը:

Յայտնի է, որ այդպիսի դեր վերապահուած է եղել նախ՝ Երկուորեակների (Ք. ա. 6030-3880 թթ. միջեւ), ապա՝ Յուլի (Ք. ա. 3880-1730 թթ. միջեւ), յետոյ՝ Խոյի (Ք. ա. 1730 - Ք. յ. 420 թթ. միջեւ) համաստեղութիւններին, որովհետեւ դրանցում այդ թուականներին տարեմուտն էր՝ գարնանային գիշերահաւասարի օրը: Շումերական ակունքներ ունեցող բաբելոնեան տիեզերաստեղծման առասպելի համաձայն, երբ Մարդուկ աստուածն արարեց երկնակամարը եւ այն զարդարեց Կենդանակերպի 12 համաստեղութիւններով, դրա պահպանութիւնը յանձնարարեց այդ համաստեղութիւններին՝ իւրաքանչիւրին 2000 տարուայ տեւողութեամբ: Առաջինը Երկուորեակների համաստեղութիւնն էր, երկրորդը լինելու էր Յուլի համաստեղութիւնը, ապա՝ Խոյինը, եւ այդպէս հերթականութեամբ¹⁹: Կենդանակերպի՝ առաջինը

18 Ա. Արքախանյան, *ԱԶ*, աշխ., էջ 112:
19 Д. Федер, Мифы и легенды древнего Двуречья, М., 1965, стр. 37.

համարուած համաստեղութիւնն էր նախապէս լինելու առաջնորդ այծի երկնային արտապատկերումն ու խորհրդանիշը, մանաւանդ որ երկուորեակներ մշտապէս ծնում է այծը, ոչ թէ մարդը (եւ ո՛չ առասպելական զոյգ ցլիկների մայր համարուած կովը, առասպելական զոյգ մտրուկներ ծնած զամբիկը): Իսկ մարդն առհասարակ տեղ էլ էր ունենալու Կենդանակերպ (յուն. *Ζωδιακός* / «գազանային») կոչուած համաստեղութիւնների մէջ:

Հայոց այբուբենի առաջին տառը՝ Ա-ն, թէպէտ այծագլուխ չի յիշեցնում, բայց իր ա արտասանութեամբ եւ այբ անուան մէջ յ հնչիւնի առկայութեամբ, կարծես, ուղղորդում է մեզ դէպի այժ բառը (այժ-ին արմատակից բառերից միայն յունարէն *δαιξ*-ն է, որ մեր բառի նման պահպանում է հ.-ե. **aiǵ-* այժ արմատի միջնաձայնը): Ա-ի, այբ անունը իր բ-ն ստացել է յաջորդ Բ տառի բեմ անուան ազդեցութեամբ, իսկ նախնական *աղի-ը (յունական ալփա-ից ծագած լինելու դէպքում) կարող էր այբ-ի վերածուել այժ բառի յ-ի ազդեցութեամբ: Այբուբենի առաջին տառի «ա» արտասանութեան եւ «այծ» անուն կրելու տեսանկիւնից, յունական այբուբենից բացի, ուշադրութեան է արժանի հարաւային եւ արեւելեան սլաւոնների կիրիլեան այբուբենը (*кѣрѣнъ*): Այստեղ եւս այբուբենն սկզբնաւորում է *аз* կոչուած A տառը, որի անունը մեզ ուղղորդում է դէպի հայերէն այժ բառի հնդիրանական արմատակիցները (հմտ. հին հնդկ. *ajā* «այծ», *ajā-* «բուծ, գառնուկ, ուլիկ», աւեստ. *izaēna/izaena* «մաշկեայ, կաշուեղէն», միջ. պարս. *azak* «այծ» եւ այլն)²⁰:

*Ազ արմատն առկայ է նաեւ հայերէն Աղիազ (արու այծ) բառում, որը հաւանաբար սկզբնապէս «առաջնորդ այծ» է է նշանակել: Իսկ առաջնորդ այծը պարտադիր արու այծ էր լինում: Եթէ այս բա-

20 ՀԱԲ, հտ. I, Երեւան, 1971, էջ 169:

«նի -ազ բաղադրիչի համար ընդունում ենք «այծ» նշանակութիւնը, ապա *Աոխ- (<*նախ) բաղադրիչը կարող ենք նոյնը համարել հայերէն Աախ բառարմատի հետ, որը նշանակում է «առաջ, առաջուց» եւ «գլխաւոր, հինը, առաջինը»: Այս բառին հնչումով մօտ բառեր կան իրանական լեզուներում, որոնք իմաստով էլ բաւականին մօտ են, սակայն, ինչպէս Հ. Աճառեանն է գրում, այդ «բառերի ծագումն ու մեկնութիւնը յայտնի չէ. ուստի որոշ չէ նաեւ թէ ի՛նչ յարաբերութիւն ունի հայը սրանց հետ»²¹: Այդուհանդերձ, մեր կողմից առաջարկուող Աոխազ<*Աախ-ազ (ուա<ա-ա տարնմանութեամբ) մեկնաբանութիւնը համահունչ է նոխագի առաջնորդ այծը լինելու իրողութեանը (համտ. Աախ արմատից ծագած Աախակ բառի «առաջնակարգ դիրք կամ պաշտօն» նշանակութիւնը²²: Իսկ որ այդպիսի կարգավիճակ ունեցողները տարբեր դիցարաններում եղել են այծաբնոյթ աստուածութիւնները, ցոյց են տալիս ուրարտական Խալդի (Hal-di//«այծ աստուած») գերագոյն աստծոյ եւ փոխգիական դիցարանը գլխաւորած աստծոյ «փոխգիական Ջեւսի» օրինակները: Վերջինս կրում էր այծ նշանակող ΑΣΕΙΣ մականունը:²³ Այսպիսով, բացայայտում է կիրիլեան այբուբենի Α-ի α3 անունան «այծ» իմաստը: Այս կարծիքը հաստատում է նոյն այբուբենի երկրորդ տառի՝ Β-ի βΥΚΑ անունան միջոցով (սրանց միացումով է գոյացել α3-βΥΚΑ > α3βΥΚΑ բառը. համտ. այբուբեն):

Α3-ի նման βΥΚΑ-ն եւս հնդեւրոպական ծագում ունի. համտ. հայ. բուծ «կաթնկեր, գառնուկ, ուլիկ», հին հնդկ. bukka «բուծ», bukkā «այծ», աւեստ. bũza «ուլ», պարս. buz «այծ, ուլ», քրդ. biziñ «այծ», գերմ. Bock, հրգ. boc, անգլիսաքս.

bucca, անգլ. buck, հին իռլ. boc/bocc «նոխագ, արու այծ»: Հայերէնից են վրաց. բուծի՝ «մատղաշ գառնուկ», թերեւս չեչեն. բուծ, բոծ²⁴: Մանկական թոթովանքի լեզուով ունենք բոյ (ուլիկ, գառնուկ) բառը, որի *բուծ արմատը (բոյ<*բուծ-ո) առկայ է նաեւ Վանայ լճից արեւելք գտնուած Բուծուենիք (<*բուծ-ուեն-իք) գաւառանունան մէջ: Լճից հարաւ-արեւելք էր Բոգուենիք (<*բոգ-ուենի-ք) գաւառը, որի անունան մէջ առկայ *բոգ բաղադրիչը centum-ային ձեւ է՝ բուծ satəm-ային ձեւի դիմաց (համտ. հին հնդկ. bukka եւ աւեստ. bũza): Ինչպէս վերեւում նշուեց, փոխգիական դիցարանը գլխաւորած Ջեւս աստուածը կոչւում էր ΑΣΕΙΣ, որը «այծ» էր նշանակում, բայց նա կոչուել է նաեւ Βωζιος,²⁵ որը դարձեալ նոյնն է նշանակում, որովհետեւ արմատակից է թրակ. βύζ(α)- «արու այծ» բառին եւ Βύζας «այծ», Bizent «այծիկ, ուլ» անձնանուններին²⁶: Բերուած բոլոր բառերի նման Հ.-Բ. *bhuǵe- նախածեւից է սերում նաեւ կիրիլեան այբուբենի Β տառի βΥΚΑ անունը:

Գերմանական լեզուներն ունեն «տառ, գիր, գրութիւն, գիրք» նշանակող հետեւեալ բառերը՝ գոթ. bōka, հին իսլ. bók, հին անգլ. bōc, հին բարձր գերմ. buoh եւ այլն, իսկ սլաւոնական լեզուների համապատասխան բառերը՝ հին սլաւ. bukŭ «տառ», հին ռուս. бѹкѹ, бѹкѹбѹ «տառեր, գիր, գրութիւն նամակ» եւ այլն, իրենց կերի պատճառով համարւում են փոխառեալ գերմանական լեզուներից²⁷: Բանն այն է, որ այդ բառերի հիմքում տեսնում են հաճարենու, կաղնու հնդեւրոպական անունները: Այսուհանդերձ, հայկական եւ հին հնդկական (սլաւոնական կ-երի դէպքում) տուեալների լոյսի ներքոյ դրանց կարելի է այլ բացատրութիւն տալ: Սլաւոնական լե-

24 ՀԱԲ, Բտ., I, էջ 482:
25 Գ. Ջաֆուկեան, Աշ. աշխ., էջ 114:
26 В. Георгиев, Աշ., աշխ., էջ 118, 119, 132:
27 ИЯИ, т. II, стр. 622-623.

21 ՀԱԲ, Բտ., III, Շրեան, 1977, էջ 419:
22 Նոյն տեղում:
23 Գ. Ջաֆուկեան, Աշ. աշխ., էջ 110:

զուների «տառեր, գիր, գրութիւն» նշանակող այդ բառերը կարող են փոխառուած չլինել գերմանական լեզուներից, այլ նրանց հետ միասին լինել արմատակիցների «այծ» նշանակող նոյնահունչ բառերի (համտ. հին իսլ. bukkr, հին անգլ. bucca հին բարձր գերմ. boc «այծ»):²⁸ Ի նկատի առնենք, որ գերմանական եւ սլաւոնական ցեղերի լեզուակիր նախնիները հնդեւրոպական միւս ժողովուրդների նախնիների հետ միասին ժամանակին բնակուել են Հայկական լեռնաշխարհում եւ յարակից լեռնային շրջաններում²⁹: Քիչ հաւանական է, որ այս տարածքների քարեդարեան բնակիչների եւ նրանց սերունդների տեղեկատուական կապն ապահովելուն կոչուած պատկերազրբը փորագրուէին ոչ թէ քարերին ու ժայռերին, այլ ծառերին ու փայտերին: Վերջիններս այդ նպատակով օգտագործուել են աւելի ուշ: Այնուամենայնիւ, ինչպէս գերմանների ունական նշանագրերի օրինակով գիտենք, դրանք մնացել են երկրորդական դիրքում՝ քարէ կոթողների համեմատ: Մարդիկ այլ մօտեցում կարող էին դրսեւորել միայն քարի բացակայութեան դէպքում:

Նման պատճառով Հայոց լեռներից միջագետքեան հարթավայր արտագաղթած բնակչութեան ինչ-որ հատուած³⁰ քարին փորագրելը փոխարինել էր կաւէ սալիկներին նշանագրեր դնելով: Պատահական չէ, որ Հայաստանի ժայռապատկերներում բազմիցս հանդիպող Հայկ (Օրիոն) համաստեղութեան ♂ ♂ գծապատկերը՝ «աստուած» նշանակող * այս նշանի եւ «կին» նշանակող ∇ այս նշանի հետ միասին տեղ է գտել վաղ շումերական կաւէ մի սալիկի վրայ³¹: Օրիոն համաստեղու-

թիւնը Հայոց աստուածային նախահայր Հայկին էր ձօնուած, համարւում էր նրա խորհրդանիշը, ուստի նրա անունով էլ կոչուում էր Հայկ/Հայկն: Ժայռապատկերներում Օրիոնի գծապատկերը դարձել էր Հայկի խորհրդանշանը³² եւ պատկերւում էր յաճախ Հայկի խորհրդանիշ՝ առաջնորդ քարայծի հետ կամ որպէս սրա մարմին (նկ. 1)³³: Ուշագրաւ է, որ Հայկի ♂ այս խորհրդանշանն առկայ է նաեւ խեթական թագաւոր Սուպիլուլիումայի կնիքի վրայ. կենտրոնում է՝ վերեւից արեւի թեւաւոր սկաւառակի, իսկ ներքեւից՝ «աստուած» նշանակող մեհենագիր նշանի միջեւ³⁴: Աւելի ուշագրաւ է Արեւմտեան Հայաստանի Սերբար թեփէ հնավայրից յայտնաբերուած ուրարտական դարաշրջանի բրոնզէ ընծայական թիթեղը՝ նոյն նշանը կրող դրօշի պատկերով: Սա գտնւում է դիցուհու վերեւ պարզած աջ ձեռքին, իսկ ձախ ձեռքով նա բռնել է այծի եղջիւրից, որի հետ ընդառաջ է եկել թուշնաթեւ եւ աղեղնաւոր աստծուն (նկ. 2)³⁵ (համտ. Հայկի բնութագրումը Խորենացու եւ Անանուն պատմիչի երկերում՝ «Հաստաղեղն», «աղեղնաւոր», «կորովի աղեղամբ»):³⁶

Bruxelles, 1966, p. 65, fig. 59-61; *Le berceau de l'humanité*, La présente édition de L'encyclopédie de la civilisation est publiée sous la direction de Marcel Brion de l'Académie Française, Londres, Genève, 1976, p. 87, fig. 111.

32 Ս. Պետրոսեան, *Հնագոյն Հայաստանի գլխաւոր աստուածութիւնների շուրջ*, էջ 125-133:
33 Հ. Մարտիրոսեան, *Հայաստանի անհնայարեան Աշտուաղեղը եւ Արանց ուրարտա-հայկական կրկնակները*, Եր., 1973, էջ 23, աղ. V. Ս. Պետրոսեան, *Հայոց մեհենագրութեան ակունքներում*, Գիւմրի, 2008, էջ 7-8, 14-15, Ա. 2գ:
34 C. W. Ceram, *Le secret des Hittites. Découverte d'un ancien empire*, Librairie Plon, Paris, 1955, p. 163, fig. 28; O. R. Gurney, *Hetyci*, Warszawa, 1970, p. 60, fig. 3.
35 Ս. Հմայեակեան, *Վանի թագաւորութեան պետական կրօնը*, Երեւան, 1990, էջ 146 եւ աղ. 9:
36 Խորենացի, Ա, թ, Ա, ժա. *Սերբարի նախկոպոսի պատմութիւն*, Երեւան, 1939, գլ. Ա, էջ 3:

28 ՀԱԲ, Բտ., I, էջ 482:
29 ИЯИ, т. II, стр. 865-894.
30 Ս. Մարտիրոսեան, *Նախնայարեան Ռասարակութիւնը Հայաստանում*, Երեւան, 1967, էջ 227:
31 Նկարները տե՛ս M. E. Mallowan, *L'aurore de la Mésopotamie et de l'Iran*, Editions Sequoia, Paris-

Հնդեւրոպական ազգակից լեզուների հետեւեալ բառերին՝ յուն. σκάλλω «փորել», «քաղհանել», σκαλός «բրդ», թրակ. σκάμνη «դանակ, թուր», իսթ. iskallāi «պատուել, ճեղքել, խորտակել», լատին. scalpro «քանդակել», լիտ. skėliti «ճեղքել», հին իսլ. skalm «թուր, դանակ» եւ այլն⁵⁴:

*Քաղ արմատի «ճեղքող, խորտակող, պատուող» իմաստի զարգացումով ունենք ինչպէս հեթանոս Հայերի ռազմի աստծոյ՝ Վահագնի Վիշապաքաղ մակերիը (լայնաբարձ «վիշապասպան» իմաստով), այնպէս էլ քաղ՝ «արու այծ», բառը: Այս վերջինի զարգացման աստիճանի վրայ է յուներէն (պելասգերէնից) 'Ιξάλος «կրտած այծ, քաղ» բառը, որը Գ. Ջահուկեանը հակուած է Համարելու մեր քաղեմ, քեղի եւ ցելում բառերի (վերջինիս հ.-ե. *sk- նախաձայնով ձեւից) արմատակիցը⁵⁵: Թէ՛ Հայերէն, թէ՛ յունարէն բառերի դէպքում նկատի է առնուել պոզահարող արու այծը: Եթէ Հայերէն քաղ եւ յունարէն 'Ιξάλος բառերը ի ցոյց են հանում արու այծի «ճեղքող խորտակող» լինելու իրողութիւնը, ապա Հայ. քաղակ՝ «քանդակումն», եւ լատին. scalpro «քանդակել», դրանց արմատակից բառերը բացայայտում են մէկ ուրիշ իրողութիւն՝ այծին, ապա դիցայծին վերագրուած՝ քարեղէն նիւթը փորագրելու, քանդակելու կարողութիւնը:

Յունարէն 'Ιξάλος բառը մեզ տանում է դէպի յունա-էտրուսկեան ծագումով լատինական այբուբենի X տառանշանը, որի իքս անունը կրկնում է յունարէն բառի առաջին մասը (այբուբենի հիմք դարձած մեհենագրութիւններում ձայնաւորումը ակրոֆոնիկ՝ առաջնավանկային, առաջնաձայնային էր), իսկ տեսքը՝ Հայաստանի ժայռապատկերներից յայտնի եւ դրանցում

այծապատկերներին ուղեկցող նշանը⁵⁶: Հին գերմանների մեհենագրային ծագումով ռունական այբուբենում (նկ. 3) կար X նշանագիրը՝ ց (գ) հնչումով: Ուշագրաւ է, որ գերմանական լեզուներում կան «ուլ, այծիկ» եւ «էգ այծ» նշանակող՝ նոյնպէս ց (գ) հնչում ունեցող մի շարք բառեր (Հմմտ. գոթ. gaitis, հին անգլ. gāt անգլ. goat, հին իսլ. geit, հին բարձր գերմ. geiz, որոնց հ.-ե. *g^(h) և նախաձեւը Համարում է նախասեմական լեզուից կատարուած փոխառութիւն⁵⁷: Թէպէտ նշուել է գերմանական լեզուների յիշեալ բառերի եւ լատին. haedus «այծիկ, ուլ» բառի ազգակիցներ լինելու իրողութիւնը, բայց հաշուի էի առնուել, որ դրանք իրենց արմատակիցներն ունեն հայերէնում, ընդ որում՝ արմատի աւելի նախնական նշանակութեամբ:

Խօսքը Հայերէն կայթ բառի եւ նրա տարբերակ *կայտ (կայտառ եւ կայտիռ բառերում) արմատի մասին է, որոնք Համարում են հաւաստի ստուգաբանութիւն չունեցող արմատներ: Կայթ նշանակում է «ցատկուտելը, ոտքի թփրտոց, ուրախութեան՝ ցնծութեան պար», որից՝ կայթել «ուրախանալ, ցատկուտել, խաղալ»՝ այծերին եւ յատկապէս ուլերին բնորոշող իմաստներ (Հմմտ. յիշեալ 'Ιξάλος բառը «ցատկող, ալխոյթ» իմաստով գործածուած հէնց այծի Համար)⁵⁸: Կայթել նշանակում է նաեւ «ծափ զարնել», իսկ կայթս հարկանել՝ «բաժակին

56 Հ. Մարտիրոսեան, Հ. Իսրայելեան, Գեղամայ լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական յուշարձանները», հտ. VI, պրակ II, մկ. 150, 1971. Հ. Մարտիրոսեան, Գեղամայ լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական յուշարձանները», 11, Երեւան, 1981, աղ. I. Աղմի, Հայաստանի նախնադարեան Աշխարհը եւ Արագ ուրարտու-հայկական կրկնակները, էջ 23, աղ. V. Գ. Կարախանեան, Պ. Սաֆեան, Սիմիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական յուշարձանները», 4, Երեւան, 1970, աղ. 246, մկ. 1, աղ. 122, մկ. 2, աղ. 114, մկ. 4:

57 ИЯИ, т. II, стр. 586.
58 Գ. Ջահուկեան, Աշխ., էջ 86:

54 Նոյն տեղում, նաեւ՝ Գ. Ջահուկեան, Աշխ., էջ 59, В. Георгиев, Աշխ., էջ 114:
55 Գ. Ջահուկեան, Աշխ., էջ 114, ծան. 33:

ուժգին խփելով հնչեցնել»⁵⁹: Վերջիններս եւս առնչուում են այծերին, երբ նկատի ենք առնում արու այծերի մենամարտը կրկնող ռազմական ծափ պարերի Համապատասխան ամահարումները եւ բաժանները այծի պոզերից պատրաստուած լինելու Հանգամանքը: Կայտառ բառը բաղկացած է կայտ արմատից, -առ վերջածանցից (Հմմտ. խոչ-առ, հաւ-առ, պայծ-առ, վրտ-առ եւ այլն) եւ նշանակում է «ալխոյթ, առոյթ, եռանդուն»: Ըստ Հ. Աճառեանի, սրա երկրորդ ձեւն է կայտիո՝ «ուրախութիւն, ուրախութիւնից խաղալ ցատկուտելը», որից՝ կայտառակ՝ «ուրախ ուրախ վազվառել, եռալ-գեռալ»: ⁶⁰ Կայտ արմատի *կայծ տարբերակի երբեմնի գոյութեան ընդունումը (տ/ծ հնչիւնական Համապատասխանութեան տեսանկիւնից Հմմտ. բուտ/բուծել, մուտ/մուծել, պիղտ) պղտոր/պիղծ, տաւտանել/ծաւտանել արմատակից զոյգերը) մեզ նորից տանում են «այծ» եւ «գիր» հասկացութիւնների իմաստաբանական միասնական դաշտ (Հմմտ. «կայծել - դրոշմել, կամ գրել»):⁶¹

Այս տեսանկիւնից ուշագրաւ է Հայ. գիր բառը, որի «տառ, գրութիւն» նշանակութիւնից աւելի հին է «փորագրել, քանդակել» նշանակութիւնը, ինչը գալիս է դեռեւս Հնդեւրոպական միասնութեան ժամանակաշրջանից: Նրա հիմք հ.-ե. *yer- արմատից են ծագում նաեւ ժառանգ լեզուների հետեւեալ բառերը՝ հին հնդկ. vrana «վէրք, պատուուածք», յուն. πλῆγ «խարտոց», ալբ. vore «վէրք», հին սլաւ. rana «վէրք», անգլ. սաքս. wrōtan «փորել» եւ այլն: Ըստ Հ. Աճառեանի, «մեր բառի հետ ճիշտ համեմատելի են գոթ. writs «գիր», անգլոսաքս. writ «գիր», wroett «փորագրութիւն, զարդարանք», writan, մագ. wriiten, որոնք բխում են նոյն wer- արմատից՝ աճած t աճականով եւ նշանակում են

«վիրաւորել, պատուել, փորագրել, նկարել, գրել (նշանակութեան զարգացման Համար Հմմտ. յուն. γράφω «ճանկաւ, փորագրել, գրել, նկարել», որի Համար էլ՝ Հայ. քերել եւ քերականութիւն»⁶²: «Գրել»//«քարին փորագրել» նշանակութիւնը պահպանուել է յետագայ դարերում եւս: Մովսէս Խորենացին հետեւեալ կերպ է նկարագրում մեսրոպեան այբուբենի արարումը: Մեսրոպ Մաշտոցն աղօթելիս «տեսանէ ոչ ի քուն երազ եւ ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյ աչաց թաթ ձեռին լըջոյ գրելով ի վերայ վիմի, զի որպէս ի ձեան վերջք գծին՝ կուտեալ ունէր քարն... եւ յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր...»⁶³:

Ինչպէս *կուտ «այծ» (որից՝ կտի, կտիկ «այծ, ուլ») եւ «կտեալ-գծեալ, կամ գրեալ»,⁶⁴ այնպէս էլ քաղ «արու այծ» եւ «քաղակ-քանդակումն»⁶⁵ արմատակից զոյգերը վկայում են, որ հազարամեակներ շարունակ Հայի լեզուամտածողութեան մէջ պահպանուած են եղել Հայոց հնագոյն գրութեան ժայռապատկերային փորագրութիւն լինելու վերյուշը եւ դրա «իծագրեր» կոչուելու պատճառների գիտակցումը:

Բերուած նիւթը եւ դրա վերլուծութիւնը մղում են հետեւեալ եզրակացութեան: Հնդեւրոպական հնագոյն գրութիւնը եղել է ժայռափոր պատկերագրութիւնը: Հայկական լեռնաշխարհի ժայռերին Հնդեւրոպական տեղաբնիկ ցեղերի կողմից նախ օբսիդիանէ, ապա մետաղէ ծայրակալով գրոցի միջոցով արուած փորագիր «իծագրեր»-ժայռապատկերներն են դարձել Հայկական (թերեւս՝ նաեւ միւս հնդեւրոպական ժողովուրդների) առաջին մեհենագիր գրութիւնների հիմքը:

59 ՀԱԲ, հտ., II, էջ 505:
60 Նոյն տեղում, էջ 509-510:
61 Բառգիրք հայոց, էջ 157:

62 ՀԱԲ, հտ. I, էջ 561:
63 Խորենացի, Գ, ծգ:
64 Բառգիրք հայոց, էջ 171:
65 Նոյն տեղում, էջ 329: